Շրջաբերական Նամակը

# FRATELLI TUTTI

*Նորին Սրբութիւն Ֆրանչիսկոս Սրբազան Քահանայապետի*

Եղբայրութեան եւ Ընկերային Բարեկամութեան վերաբերեալ

## Ի՞ՆՉ Է ՍԱ։

Նորին Սրբութիւն Ֆրանչիսկոս Սրբազան Քահանայապետի երրորդ շրջաբերական նամակը, որը յաջորդում է *Lumen fidei* (2013) եւ *Laudato si'* (2015) շրջաբերականներին։

Այն ստորագրուել է 2020 թուականի հոկտեմբեր 3-ին՝ Իտալիայի Ասսիզի քաղաքում։

## ԻՆՉԻ՞ ՎՐԱՅ Է ԱՅՆ ՀԻՄՆՈՒԱԾ։

- Այստեղ քննութեան են առնուած վերջին տարիներին Նորին Սրբութեանը մտահոգող եղբայրութեան եւ ընկերային բարեկամութեան վերաբերեալ հարցերը։
- Թեմաներ, որոնք արծարծուած են *«Մարդկային եղբայրութիւնը յանուն աշխարհի խաղաղութեան եւ համագոյակցութեան»* վերտառութեամբ փաստաթղթի մէջ, որ համատեղ ստորագրել էին Սրբազան Քահանայապետը եւ Գերագոյն Իմամ Ահմատ Ալ – Տայըպը՝ 2019 թուականի փետրուարին։

## Ո՞ՒՄ Է ԱՅՆ ՈՒՂՂՈՒԱԾ։

Բոլոր նրանց, ովքեր այս խորհրդածութիւնը կ'ընդունեն որպէս երկխօսութեան հրաւէր։

## ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԸ

- *«Fratelli tutti»*-ն բաղկացած է ընդհանուր ներածութիւնից եւ 8 գլուխներից

Ներածութիւն
Գլուխ *I*. ՓԱԿՈՒԱԾ ԱՇԽԱՐՀԻ ՄՈՒԹ ՍՏՈՒԵՐՆԵՐԸ
Գլուխ *II*. ՄԻ ՕՏԱՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՅ
Գլուխ *III*. ՄՏՈՎԻ ՊԱՏԿԵՐԱՑՆԵԼ ԵՒ ՍՏԵՂԾԵԼ ԲԱՑ ԱՇԽԱՐՀ
Գլուխ *IV*. ՍԻՐՏ, ՈՐԸ ԲԱՑ Է ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻՆ
Գլուխ *V*. ԱՒԵԼԻ ԼԱՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Գլուխ *VI*. ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՐՍՈՒՄ
Գլուխ *VII*. ՆՈՐ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ
Գլուխ *VIII*. ԿՐՕՆՆԵՐԸ՝ Ի ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆ

## Ի՞ՆՉ Է ԱՌԱՋԱՐԿԻՈՒՄ։

- Սա եղբայրութեանը եւ ընկերային բարեկամութեանը նուիրուած հանրային շրջաբերական է։
- Այն վերաբերում է եղբայրական սիրոյ դաւանանքի համամարդկային բնոյթին։
- Շրջաբերականի նպատակն է եղբայրութեան եւ ընկերային բարեկամութեան նոր տեսլական առաջադրելը։
- Այն յորդորում է երազել միասին՝ որպէս մէկ համամարդկային ընտանիք եւ որպէս ճամփորդակիցներ, ովքեր նոյն միսի եւ արիւնից են ստեղծուած։

## ՈՐՏԵՂԻ՞Ց Է ՎԵՐՑՈՒԱԾ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԻ ՏԻՏՂՈՍԸ։

- *«Fratelli tutti»* արտայայտութիւնը Ասսիզիի Սուրբ Ֆրանչիսկոսի խօսքերն են (Խրատներ, 6, 1)։
- Սուրբը այս արտայայտութիւնն էր գործածում՝ առաջարկելով հետեւել Աւետարանի խօսքով համեմուած կենսակերպին։
- Սուրբ Ֆրանչիսկոսը յորդորում է բոլոր տղամարդկանց եւ կանանց սիրել այնպիսի սիրով, որը ունակ է յաղթահարել ամէն տեսակ աշխարհագրական խոչընդոտ եւ հեռաւորութիւն։

## ԷԿՈՒՄԵՆԻԿ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱՂՕԹՔ

«Սուրբ Հոգի, արի՛, ցոյց տո՛ւր մեզ քո գեղեցկութիւնը,
որը արտացոլւում է երկրի բոլոր մարդկանց մէջ,
որպէսզի վերստին բացայայտենք,
որ կարեւոր եւ անփոխարինելի են բոլորը՝
մէկ մարդկութեան տարբեր դէմքերը,
որոնց այդքան սիրում է Աստուած»։

Ամէն։

Շրջաբերական Նամակը

# FRATELLI TUTTI

Նորին Սրբութիւն Ֆրանչիսկոս Սրբազան Քահանայապետի

Եղբայրութեան եւ Ընկերային Բարեկամութեան վերաբերեալ

## ՓԱԿՈՒԱԾ ԱՇԽԱՐՀԻ ՄՈՒԹ ՍՏՈՒԵՐՆԵՐԸ

Ֆրանչիսկոս Սրբազան Քահանայապետը դիտարկում է աշխարհում տարածուած այն բոլոր գաղափարախօսութիւնները, որոնք արգելք են հանդիսանում համընդհանուր եղբայրութեան կառուցման համար:

«Համաշխարհային հասարակութիւնը մեզ դարձնում է հարեւաններ, բայց ոչ եղբայրներ եւ քոյրեր»:



### Ինչպէ՞ս ենք նկատում փակուած աշխարհի մութ ստուերները:

- Յուսահատութիւնը եւ բարոյալքումը, որ տարածուած են հասարակութեան մէջ:
- Բեւեռացումը, որը խոչընդոտում է երկխօսութեանը եւ համակեցութեանը:
- Մարդիկ, որոնց դիւրին է «զոհաբերելը» եւ հասարակութիւնից դուրս մղելը:
- Իրաւունքների անհաւասարութիւնը եւ ստրկութեան նոր ձեւերը:
- Բարոյական անկում եւ հոգեւոր արժէքների թուլացում:

Այսօր մենք վկան ենք այն բանի, թէ ինչպէս են աղաւաղում այնպիսի արժէքաւոր բառերի իմաստը, ինչպիսիք են՝

**ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԻԱՍՆՈՒԹԻՒՆ**

Դէմ առ դէմ կանգնելով այս մարտահրավէրներին՝ «*Fratelli tutti*» վերտառութեամբ շրջաբերականը յատուկ կերպով ընդգծում է.

«Ճանապարհը, որ պէտք է անցնենք՝ մերձաւորին մօտ լինելու ճանապարհն է: Սա հանդիպման մշակոյթն է»



Աստուած շարունակում է առատօրէն բարութիւն սերմանել:



Բարութիւն, որն ուղեկցւում է սիրով, արդարութեամբ եւ համերաշխութեամբ: Ահա այս նպատակը պէտք է իրականացուի ամէն օր:



Յոյսը աւելին է, քան անձնական յարմարութիւնը, որը սահմանափակում է մեր հորիզոնը, եւ մեր միտքը բացում վեհ գաղափարների համար:

# ՄԻ ՕՏԱՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՅ

**Բարի Սամարացու առակի մէջ ի՞նչ կերպարներ կան:**

- ԱՒԱԶԱԿՆԵՐԸ
- ՆՐԱՆՔ, ՈՎՔԵՐ ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ԱՌԱՆՑ ԿԱՆԳ ԱՌՆԵԼՈՒ
- ՎԻՐԱՒՈՐ ԵՒ ԼՔՈՒԱԾ ՋՈՀԸ

Այս իրավիճակում «*Fratelli tutti*» շրջաբերականը հարց է տալիս մեզ.

?

Այս կերպարներից ո՞ր մէկի հետ ես ինքդ քեզ նոյնացնում:
Ո՞վ է քո մերձաւորը:



«Յիսուս յորդորում է շրջուել, թէ ով է աւելի մօտիկ՝ մեր մերձաւորը լինելու համար, այլ՝ որ մենք ինքներս մերձաւոր դառնանք բոլորի համար»:

## Այսօր Բարի Սամարացու պատմութիւնը կրկնւում է.

1. Կոչեր ուղղուած դետերմինիզմին կամ ճակատագրապաշտու-թեանը արդարացնելու մեր անտարբերութիւնը:
2. Հասարակութիւնը սովորաբար փորձում է անտեսել միւսներին:
3. Աշխարհը արտօնում է եւ խրախուսում սոցիալական բացառումը:
4. Մենք վկաներն ենք սոցիալական եւ քաղաքական անտարբերութեան:

«*Fratelli tutti*»-ն կոչ է անում գործնականապէս ներգրաւուել մեր վիրաւոր հասարակութիւնների վերականգնման գործում:

Սիրոյ համար կարեւոր չէ, թէ կարիքի մէջ գտնուող որեւէ եղբայր կամ քոյր գալիս է այս կամ այն վայրից:



*Սէրն է,*
*որ փշրում է կապանքները,*
*որոնք մեկուսացնում եւ*
*բաժանում են մեզ,*
*փոխարէնը՝ կառուցելով*
*կամուրջներ:*

Ուզո՞ւմ ես անտարբերութեամբ անցնել կողքով, թէ՞ ուզում ես կանգ առնել եւ օգնութեան ձեռք մեկնել ճամփեզրին ընկած վիրաւոր մարդուն:

Այսման մեծ ցաւի եւ տառապանքի առերեսուելով մեր միակ ուղին Բարի Սամարացու օրինակին հետեւելն է:

Շրջաբերական Նամակը

# FRATELLI TUTTI

Նորին Սրբութիւն Ֆրանչիսկոս Սրբազան Քահանայապետի

Եղբայրութեան եւ Ընկերային Բարեկամութեան վերաբերեալ

## ՄՏՈՎԻ ՊԱՏԿԵՐԱՑՆԵԼ ԵՒ ՍՏԵՂԾԵԼ ԲԱՑ ԱՇԽԱՐՀ

Յիսուս ասել է. *«Դուք բոլորդ եղբայրներ եւ քոյրեր էք»* *(Մատթ. 23,8)*:

### ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆ ԿՈՉԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ԲԱՑ ԼԻՆԵԼ

- Մարդ արարածը իր ինքնադրսեւորումը գտնում է ուրիշներին անկեղծօրէն նուիրուելու մէջ:
- Սէրը աւելի մեծ կարողութիւն է պահանջում, որպէսզի ընդունենք ուրիշներին եւ հասնենք ամենահեռաւոր վայրերը:
- Սէրը, որն ունակ է յաղթահարել ամէն տեսակ խոչընդոտ, հիմնուած է «ընկերային բարեկամութեան» վրայ:



### ԲԱՐԻՔ ՍՏԵՂԾԵԼ՝ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԽԹԱՆԵԼ ԱՅՆ ԱՐԺԷՔՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԼԻԱԿԱՏԱՐ ՋԱՐԳԱՑՄԱՆԸ:

**Ինչպէ՞ս կարելի է հասնել այս ամէնին:**

- Մտածել եւ գործել որպէս համայնք:
- Պայքարել աղքատութեան եւ անհաւասարութեան կառուցուածքային պատճառների դէմ:
- Երկրի կառավարութիւնից պահանջել գործունեայ գործունէութիւն ծաւալել եւ ներդրում ունենալ խոցելի խաւերին աջակցելու գործում:
- Երաշխաւորել, որ ոչ ոք հասարակութիւնից դուրս չի մղուի:
- Հաստատել իրական եւ տեւական խաղաղութիւն՝ հիմնուած համերաշխութեան եւ ծառայութեան համընդհանուր էթիկայի վրայ:

Իւրաքանչիւր մարդ բարձրագոյն արժէք է եւ իրաւունք ունի ապրելու արժանապատուութեամբ:

Շրջաբերական Նամակը

# FRATELLI TUTTI

Նորին Սրբութիւն Ֆրանչիսկոս Սրբազան Քահանայապետի

Եղբայրութեան եւ Ընկերային Բարեկամութեան վերաբերեալ

## ՍԻՐՏ, ՈՐԸ ԲԱՑ Է ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻՆ

### Որո՞նք են այն գործողութիւնները, որոնք աշխատում են յօգուտ համայն աշխարհի եղբայրութեան:

1. Հիւրընկալել, պաշտպանել, խրախուսել եւ ընդելուզել գաղթականներին եւ բոլոր նրանց, ովքեր հասարակութիւնից դուրս են մղուած:

2. Խորապէս գիտակցել, որ այսօր կարող ենք փրկուել բոլորս միասին կամ չի փրկուի մեզանից եւ ոչ ոք:

3. Մշակել համաշխարհային իրաւական, քաղաքական եւ տնտեսական կանոնակարգ, որը կը նպաստի բոլոր ժողովուրդների խաղաղ բարգաւաճմանը:

### Ի՞ՆՉ Է ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ ԿԵՐՊՈՎ ԱՇԽԱՏԵԼԸ:

- Որոշ գործեր կատարել պարզապէս այն բանի համար, որ դրանք բարի են:
- Գործել առանց անձնական շահը հետապնդելու կամ փոխհատուցում ակնկալելու:
- Հիւրընկալել օտարականներին, նոյնիսկ եթէ այն մեզ անմիջական իրական շահոյթ չի բերում:



«Աշխարհի տարբեր երկրների իրական արժէքը գնահատւում է որպէս մեծ համամարդկային ընտանիքի բաղկացուցիչ մաս մտածելու նրանց ունակութեամբ: Աստուած միշտ տալիս է ձրիաբար»:

### Իւրաքանչիւր առողջ մշակոյթ իր բնոյթով բաց է եւ հիւրընկալ:

Մեր մտքին ու սիրտը բաց պահելը օգնում է հասկանալ նրանց, ովքեր նման չեն մեզ:

Ընդհանրական հաղորդութեան մէջ տարբեր մարդիկ տարբեր կերպ են բացայայտում իրենց տրուած աստուածային շնորհը:

Մարդ արարածը ինքնին սահմանափակ է, բէեւ սահմաններ չի ճանաչում:

Արդեօ՞ք հնարաւոր է ազգերի այս մեծ ընտանիքի ներսում բաց լինել հանդէպ մեր մերձաւորների:

Շրջաբերական Նամակը
FRATELLI TUTTI
Նորին Սրբութիւն Ֆրանչիսկոս Սրբազան Քահանայապետի
Եղբայրութեան եւ Ընկերային Բարեկամութեան վերաբերեալ

# ԱՒԵԼԻ ԼԱՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

*«Ողորմածութիւնը՝ համաձայն Յիսուսի վարդապետութեան, ամբողջ Օրէնքի համադրութիւնն է»*
(հմմտ. Մատթ. 22, 36-40)

## Ո՞րն է աւելի լաւ քաղաքականութիւնը։

- Այն քաղաքականութիւնը, որը իրապէս նպաստում է համընդհանուր բարիքին։
- Այն քաղաքականութիւնը, որը չի փորձում սոսկ քուէներ ստանալ։
- Այն քաղաքականութիւնը, որը ծառայում է որպէս անձնական աճի միջոց։
- Այն քաղաքականութիւնը, որը զարգացնում է այնպիսի տնտեսութիւն, որը ապահովում է արդիւնաւէտ բազմազանութիւն եւ գործնական մօտեցում։
- Այն քաղաքականութիւնը, որը հեռատես է եւ պատրաստ նոր, ամբողջական եւ միջկարգապահական երկխօսութեան։

**«*Fratelli tutti*» շրջաբերականը կոչ է սոցիալական եւ քաղաքական որոշումների, որոնց ոգին սոցիալական բարեգործութիւնն է։**

- ✓ Հնարաւորութիւն ստեղծել քայլ կատարելու դէպի սիրոյ քաղաքակրթութիւն, որին կոչուած ենք մենք բոլորս։
- ✓ Բոլոր մարդկանց ընդունել որպէս եղբայրներ եւ քոյրեր, առանց որեւէ մէկին բացառելու։
- ✓ Ողորմածութիւնը կարիքն ունի ճշմարտութեան լոյսի, բանականութեան լոյսի, եւ հաւատքի լոյսի։



**[ Սոցիալական բարեգործութիւնըստիպում է սիրել համընդհանուր բարիքը, այն թոյլ է տալիս արդիւնաւէտ միջոցներ փնտռել՝ յանուն բոլոր մարդկանց բարօրութեան՝ սոցիալական տեսանկիւնից, որը միաւորում է նրանց։ ]**

**Քաղաքական գործունէութեան մէջ իւրաքանչիւր անձ կատարեալ է եւ արժանի մեր սիրուն եւ յարգանքին.**

[ «Եթէ կարող եմ օգնել թէկուզ մէկ մարդու, որպէսզի աւելի լաւ կեանքով ապրի, ապա՝ արդէն իսկ արդարացուած է իմ գոյութիւնը»։ ]

Շրջաբերական Նամակը
FRATELLI TUTTI
Նորին Սրբութիւն Ֆրանչիսկոս Սրբազան Քահանայապետի
Եղբայրութեան եւ Ընկերային Բարեկամութեան վերաբերեալ

# ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՐՍՈՒՄ

## Ի՞նչ է նշանակում երկխօսել:

- ՄՕՏԵՆԱԼ
- ԽՕՍԵԼ
- ԼՍԵԼ
- ՆԱՅԵԼ
- ՃԱՆԱՉԵԼ ԵՒ ՀԱՍԿԱՆԱԼ ՄԻՄԵԱՆՑ
- ԳՏՆԵԼ ՓՈԽԸՄԲՌՆՈՒՄ



### ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ՝

մեզանից իւրաքանչիւրը կարող է ինչ-որ բան սովորել մէկ ուրիշից, ոչ ոք անպիտան չէ եւ ոչ ոքի չի կարելի զոհաբերել:

### ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ, ՈՐԸ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ Է ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆԸ.

1. Յարգում է այլոց արժանապատուութիւնը բոլոր հանգամանքներում:
2. Միաւորում է տարբերութիւնները, այսպիսով՝ երաշխաւորելով իրական եւ տեւական խաղաղութիւն:
3. Ընդունում է այլ ժողովուրդների իրաւունքները, պահպանելով բարեացակամութեան մթնոլորտ:

### Որո՞նք են այն դիրքորոշումները կամ գործողութիւնները, որ չեն նպաստում երկխօսութեանը.

- Ամէն տեսակ յարձակողական կեցուածք, որ կարող են դրսեւորել, օրինակ՝ սոցիալական ցանցերում:
- Մենախօսութիւններ, որոնք չեն թողնում լսել ուրիշների խօսքը:
- Այլոց նուաստացումը եւ վարկաբեկումը:

[ Իրական սոցիալական երկխօսութիւնը ենթադրում է յարգել այլոց տեսակէտը: ]

Շրջաբերական Նամակը

FRATELLI TUTTI

Նորին Սրբութիւն Ֆրանչիսկոս Սրբազան Քահանայապետի

Եղբայրութեան եւ Ընկերային Բարեկամութեան վերաբերեալ

# ՆՈՐ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

ԴԷՊԻ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՇԱՏ ԿԱՐԵՒՈՐ ԵՆ ՆՈՐ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ.

- Իրական ճաշտութիւն գտնել:
- Մշակել ընդհանուր ծրագրեր, որոնք չեն ժխտում մարդու անհատականութիւնը:
- Ընդունել, պաշտպանել եւ վերականգնել բոլոր մարդկանց արժանապատուութիւնը:
- Աղքատների, ընչազուրկների եւ լքուածների համար ընդունելի որոշումներ կայացնել:
- Ըմբռնել եւ արժեւորել ներում բառի իմաստը:

Յիսուսը երբեք բռնութիւն կամ անհանդուրժողութիւն չի քարոզել: Աւետարանը ասում է, որ պէտք է ներել. «Քեզ չեմ ասում, թէ՝ մինչեւ եօթ անգամ, այլ՝ մինչեւ եօթանասուն անգամ եօթ» (Մատթ. 18, 22):

## ԻՐԱԿԱՆ ՆԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ.

- Հակամարտութեան պայմաններում հնարաւոր է հասնել երկխօսութեան:
- Խուսափել թշնամանքից եւ փոխադարձ ատելութիւնից:
- Դիւրացնել տարբերութիւնների անկեղծ քննարկումը, որի հիմքը արդարութեան հասնելու փափաքն է:
- Ինչը, սակայն, չի նշանակում մոռացութեան մատնել կամ անպատիժ մնալ:
- Զրնկնել վրէժխնդրութեան արատաւոր շրջանի մէջ:



*«Խնդրում եմ Աստծուն՝ մեր սրտերը պատրաստել մեր եղբայրների եւ քոյրերի հետ հանդիպման համար, որպէսզի կարողանանք յաղթահարել մեր տարբերութիւնները, որոնց արմատները թաքնուած են քաղաքական հայեացքների, լեզուի, մշակոյթի եւ կրօնի մէջ»:*

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՉԻՍԿՈՍ

Շրջաբերական Նամակը

# FRATELLI TUTTI

Նորին Սրբութիւն Ֆրանչիսկոս Սրբազան Քահանայապետի

Եղբայրութեան եւ Ընկերային Բարեկամութեան վերաբերեալ

## ԿՐՕՆՆԵՐԸ՝ Ի ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆ

### ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ԱՍՏՈՒԾՈՅ ԶԱՒԱԿՆԵՐՆ ԵՆՔ՝ ՄԻԱՅՆ ԱՅՍ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԽԱՂԱՂ ԱՊՐԵԼ ՄԻՄԵԱՆՑ ՀԵՏ:

Կրօնները նպաստում են եղբայրութեան հաստատմանը:

Աստծուն որոնելը օգնում է ճանաչել միմեանց՝ որպէս ճամփորդակիցներ, իսկական եղբայրներ եւ քոյրեր:

Կրօնական եւ խղճի ազատութեան մերժումը մարդկութեանը աղքատացնում է:

### ԵԿԵՂԵՑԻՆ ՏՈՒՆ Է, ՈՐԻ ԴՌՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ, ՔԱՆԻ ՈՐ ՆԱ ՄԱՅՐ Է.

1. Նա կառուցում է կամուրջներ
2. Նա քանդում է պատեր
3. Նա սերմանում է հաշտութեան սերմեր:



### ԿՐՕՆՆԵՐԻ ՄԻՋԵՒ ՀՆԱՐԱՒՈՐ Է ՀԱՍՆԵԼ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ.

- Մեկնակէտը պէտք է լինի Աստուծոյ աչքերով աշխարհին նայելը, քանզի Տէրը տեսնում է իր սրտի աչքերով:
- Բռնութիւնը ոչ մի հիմք չունի մեր կրօնական հիմնարար համոզմունքներում:
- Աստծուն անկեղծօրէն եւ խոնարհաբար երկրպագելը իր պտուղներն է տալիս կեանքի, արժանապատուութեան եւ ազատութեան պահպանման գործում:

*Կրօնական առաջնորդները կոչուած են լինելու «երկխօսութեան մարդիկ», ովքեր որպէս անմիջական միջնորդներ*

*պէտք է համագործակցեն խաղաղութիւն հաստատելու գործում:*

### ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր, Երրորդութիւն սիրոյ,
քու աստուածային մտերմութեան զօրեղ հաղորդութենէն,
զեղ մեր վրայ եղբայրական սիրոյ գետը:
Տուր մեզի սէրը, որ յառաջացաւ Յիսուսի արարքներուն մէջ,
Նազարէթի իր ընտանիքին մէջ եւ առաջին քրիստոնեայ
հասարակութեան մէջ:

Պարգեւէ մեզի քրիստոնեաներուս՝ Աւետարանը ապրիլ
եւ Քրիստոսը ճանչնալ ամէն մէկ մարդ անհատի մէջ,
որպէսզի զայն տեսնենք խաչուած այս աշխարհի
լքուածներուն եւ մոռցուածներուն տանջանքին մէջ, եւ յարութիւն
առած ամէն մէկ եղբօր մէջ, որ դարձեալ ոտքի կը կանգնի:

Եկ, Սուրբ Հոգի. Ցոյց տուր մեզի քու գեղեցկութիւնդ,
որ կը ցոլայ երկրի բոլոր ժողովուրդներուն մէջ,
որպէսզի վերաբացայտենք թէ բոլորն ալ կարեւոր են,
որ բոլորն ալ անհրաժեշտ են, թէ անոնք տարբեր դիմագիծեր են
միեւնոյն այն մարդկութեան, զոր սիրուած է Աստուծմէ:

Ամէն: